ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

9 հունվար, 2023 թվականի № 2-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 74-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 74-Լ որոշման № 1 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2023 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ձեռքբերումների նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 74-Լ որոշման № 2 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2023 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 74-Լ որոշման № 3 հավելվածով հաստատված՝ Ընկերության 2023 թվականի տարեկան դրամական հոսքերի նախահաշիվը՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

9 հունվար, 2023 թվականի

ք. Երևան